



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՐԴԻՆ ԱՌԸՆԹԵՐ
ԳԻՏԱՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ ԿԱՐԾԻՔ
(AMICUS CURIAE) № 11/21**

17.05.2021թ.

ք. Երևան

Անհատ ձեռնարկատեր Ջոյա Վարդանի Մկրտչյանը (այսուհետ՝ Դիմող) դիմել է ՀՀ Սահմանադրական դատարան «Մանկության մասին» ՀՀ օրենքի՝ ՀՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցով:

Մասնավորապես, Դիմողը վիճարկում է «Մանկության մասին» օրենքի 20.1-ին հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 78-րդ հոդվածներին:

Դիմողը նշել է, որ թիվ ԱՐԴ/0070/04/15 սնանկության գործով ՀՀ Արմավիրի մարզի առաջին աստիճանի ընդհանուր իրավասության դատարանի 02.06.2016 թվականի վճռով ճանաչվել է սնանկ: Սնանկ է ճանաչվել հարկային պարտավորությունների չկատարման համար, որոնք առաջացել են իր՝ որպես անհատ ձեռնարկատիրոջ, իբրև ծավալած գործունեությունից, և ներկայումս սնանկության գործով իրականացվող գործողությունները, այդ թվում և հիմնականում՝ պարտապանի գույքի վաճառքի գործողություններն իրականացվում են այդ պահանջի բավարարման համար: Միաժամանակ, ՀՀ վարչական դատարանում ներկայումս Դիմողի հայցի հիման վրա քննվում է թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործն ըստ հայցի Ջոյա Մկրտչյանի ընդդեմ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի՝ «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» 2015 թվականի հունիսի 09-ի թիվ 1142 որոշումը վերացնելու (անվավեր ճանաչելու) պահանջի մասին, որի շրջանակներում վիճարկվում է այն վարչական ակտը, որից բխող հանրային իրավական դրամական պահանջների համար Դիմողը ճանաչվել է սնանկ, և որից բխող պահանջները գրանցվել են վերջինիս նկատմամբ և ներկայումս գտնվում են կատարման փուլում:

Դիմողը նշել է, որ իր կողմից վիճարկվում է 2015 թվականի հունիսի 09-ի «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1142 որոշումը, որպիսի վարչական ակտի կատարումը, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածի 1-ին մասի ուժով, մինչև տվյալ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, կասեցվում է, որպիսի պայմաններում օրենքի ուժով արգելվում է «Հարկ վճարողից ժամանակին չվճարված հարկային պարտավորությունների գծով վճարման ենթակա գումարը գանձելու մասին» թիվ 1142 որոշումը կատարելու համար որևէ գործողության, այդ թվում՝ Դիմողին պատկանող գույքը վաճառելուն և ստացված միջոցները բաշխելուն ուղղված որևէ գործողության կատարում:

Մինչդեռ նման պայմաններում, սնանկության գործով կառավարչի կողմից իրականացվում են ակտիվ գործողություններ պարտապանին սեփականության իրավունքով պատկանող գույքը աճուրդ-վաճառքով իրացնելու նպատակով, այլ կերպ ասած՝ Կառավարչի գործողությունները, թեև ոչ ուղղակիորեն, սակայն ուղղված են վարչական ակտի կատարմանը: Ավելին, թիվ ՎԴ/1238/05/20 վարչական գործով կայացվելիք վարչական ակտով որոշվելու է վիճարկվող վարչական ակտի անվավերության հարցը, և անվավեր ճանաչվելու դեպքում բացառվում է տվյալ վարչական ակտից բխող հանրային իրավական դրամական պահանջի կատարելիությունը: Մինչդեռ, սնանկության վարույթի կասեցման հիմքերի բացակայության պայմաններում անձի գույքն իրացվում է մի վարչական ակտից բխող պահանջի հիման վրա, որը վիճարկվում է դատական կարգով:

Ըստ Դիմողի, նման կարգավորման արդյունքում խախտվում են Դիմողի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության, արդար դատաքննության և դատական պաշտպանության իրավունքները:

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄՆԵՐ

Այսպես, Դիմողը վիճարկում է «Սնանկության մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 20.1-ին հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 78-րդ հոդվածներին:

Օրենքի վիճարկվող դրույթի բովանդակությունը հետևյալն է.

1. Մնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ:

2. Առանձին պահանջների մասով վարույթի կասեցումը չի ընդհատում սնանկության վարույթի ընթացքը:

3. Առանձին պահանջի քննությունը կասեցնելու դեպքում հետագա վարույթի ընթացքում նույն հերթի մնացած պահանջները բավարարելուց հետո կասեցված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցներ են ստեղծվում սնանկության հատուկ հաշվին: Վարույթը կասեցնելու հիմքը վերանայուց և պահանջը հաստատվելուց հետո դատարանի որոշմամբ սնանկության հատուկ հաշվին ստեղծված դրամական միջոցները փոխանցվում են պարտատիրոջը: Եթե պահանջի քննության կասեցման հիմքերը վերանայուց հետո կասեցված պահանջը չի հաստատվում, ապա այդ հիմքով սնանկության հատուկ հաշվին ստեղծված դրամական միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

4. Այն պարտատերը, որի պահանջի քննությունը կասեցվել է, կարող է մասնակցել պարտատերերի ժողովներին միայն խորհրդակցական ձայնի իրավունքով: Պահանջի քննության կասեցման հիմքերը վերանայու և դատարանի կողմից այդ պահանջը հաստատվելու դեպքում պարտատերը մասնակցում է պարտատերերի ժողովին քվեարկության իրավունքով՝ սույն օրենքով սահմանված կարգով:

Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Հայաստանի Հանրապետությունում ճանաչվում և հավասարապես պաշտպանվում են սեփականության բոլոր ձևերը:

Սահմանադրության 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի օրինական հիմքով ձեռք բերած սեփականությունն իր հայեցողությամբ տիրապետելու, օգտագործելու և տնօրինելու իրավունք:

3. Սեփականության իրավունքը կարող է սահմանափակվել միայն օրենքով՝ հանրության շահերի կամ այլոց հիմնական իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով:

4. Ոչ ոք չի կարող գրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Սահմանադրության 61-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի իր իրավունքների և ազատությունների արդյունավետ դատական պաշտպանության իրավունք:

Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝

1. Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք:

Սահմանադրության 75-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքները և ազատությունները կարգավորելիս օրենքները սահմանում են այդ իրավունքների և ազատությունների արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ կազմակերպական կառուցակարգեր և ընթացակարգեր:

Սահմանադրության 78-րդ հոդվածի համաձայն՝

Հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է պիտանի և անհրաժեշտ լինեն Սահմանադրությամբ սահմանված նպատակին հասնելու համար: Սահմանափակման համար ընտրված միջոցները պետք է համարժեք լինեն սահմանափակվող հիմնական իրավունքի և ազատության նշանակությանը:

Այսպես, Դիմողը վիճարկում է Օրենքի 20.1-ին հոդվածն այն հիմքով, որ չի նախատեսվում սնանկության վարույթի ամբողջական կասեցում այն դեպքում, երբ, օրինակ, դատական կարգով վիճարկվում է այն վարչական ակտը, որն անձին սնանկ ճանաչելու հիմք է հանդիսացել:

Վիճարկվող հոդվածի 1-ին մասի համաձայն՝ սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կարող է կասեցվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ: Քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածով սահմանված են գործի վարույթը կասեցնելու հիմքերը, որի 1-ին մասի 1-ին կետի համաձայն՝ դատարանը պարտավոր է կասեցնել գործի վարույթը, եթե անհնարին է տվյալ գործի քննությունը

մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակվիչ ակտ կայացնելը: ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 83-րդ հոդվածն էլ, իր հերթին, վերաբերում է վիճարկման հայցատեսակին, համաձայն որի՝ վիճարկման հայցի վարույթ ընդունելը կասեցնում է վիճարկվող վարչական ակտի կատարումը մինչև այդ գործով գործն ըստ էության լուծող դատական ակտի օրինական ուժի մեջ մտնելը, բացառությամբ նույն հոդվածով նախատեսված 4 դեպքի: Վարչական ակտը իրենից ենթադրում է որևէ իրավունքի/պարտականության սահմանում (փոփոխում, ճանաչում, դադարեցում) անձի համար, հետևաբար վարչական ակտի կատարումը՝ ենթադրում է իրավունքի և/կամ պարտականության իրացում, այսինքն՝ ոչ թե բուն իրավունքը կամ պարտականությունը, այլ դրա իրացումը: Մասնավորապես, եթե վարչական ակտով անձի վրա դրվել է որևէ պարտավորություն (միջամտող վարչական ակտ), ապա նշված *ակտի վիճարկումը կենթադրի տվյալ անձի կողմից տվյալ պարտավորության կատարման կասեցում:*

Օրենքի 20.1-ին հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առանձին պահանջի քննությունը կասեցնելու դեպքում հետագա վարույթի ընթացքում նույն հերթի մնացած պահանջները բավարարելուց հետո կասեցված պահանջի չափի համամասնությամբ դրամական միջոցներ են սառեցվում սնանկության հատուկ հաշվին: Վարույթը կասեցնելու հիմքը վերանալուց և պահանջը հաստատվելուց հետո դատարանի որոշմամբ սնանկության հատուկ հաշվին սառեցված դրամական միջոցները փոխանցվում են պարտատիրոջը: Եթե պահանջի քննության կասեցման հիմքերը վերանալուց հետո կասեցված պահանջը չի հաստատվում, ապա այդ հիմքով սնանկության հատուկ հաշվին սառեցված դրամական միջոցները բաշխվում են սույն օրենքով սահմանված կարգով՝ դատարանի որոշման հիման վրա:

Ուստի, անդրադառնալով Դիմողի այն պնդմանը, որ սնանկության վարույթն ամբողջությամբ կասեցնելու հիմքերի բացակայության դեպքում խախտվում են անձի՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքներ (սեփականության, արդար դատաքննության և այլն), փաստենք, որ Օրենքի 20.1-ին հոդվածով նախատեսված է սնանկության վարույթի կասեցում առանձին պահանջների մասով: Նշված կարգավորումը բխում է այն տրամաբանությունից, որ սնանկության վարույթում հնարավոր է լինեն մեկից ավելի պահանջատերեր, և մնացած պահանջատերերի

իրավունքների երաշխավորման և սնանկության վարույթի բնականոն և անխտչընդոտ ընթացքն ապահովելու տեսանկյունից էլնելով օրենսդիրը նախատեսել է սնանկության վարույթի կասեցման հնարավորություն առանձին պահանջի մասով:

Ելնելով դիմումով ներկայացված դատական գործերի վերլուծությունից, եզրակացնում ենք, որ եթե վիճարկվում է վարչական ակտ, ապա ենթադրվում է, որ կասկածներ կան դրա օրինականության և հիմնավորվածության վերաբերյալ և/կամ այն խախտում է այլոց իրավունքներն ու օրինական շահերը, այսինքն՝ կախված այն հանգամանքից, թե ով է ներկայացրել հայցադիմումը՝ նժարի մի կողմում դրվում է այն անձի (հասարակության, պետության) շահը, ով դիմել է դատարան իր իրավունքների լեզվիտիմ պաշտպանության ակնկալիքով, իսկ նժարի մյուս կողմում, կախված այն հանգամանքից, թե ինչպիսի վարչական ակտ է վիճարկվում, դրվում է մեկ այլ անձի, պետության կամ հասարակության շահը: Եվ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ա) հարաբերությունների սահմանման և կարգավորման առումով օրենքը պետք է լինի առավելապես ընդհանուր և վերացական, քան կոնկրետ հասցեագրված, բ) նախատեսվող սահմանափակումները պետք է լինեն համաչափ և բխեն ինչպես միջազգային իրավունքի, այնպես էլ ազգային օրենսդրության ժողովրդավարական սկզբունքների էությունից, ապա իավաչափ է, որ վարչական ակտի վիճարկման դեպքում նախատեսվել է բոլոր տեսակի վարչական ակտերի կատարման կասեցում, առանց ի նկատի ունենալու առանձին, անհատական դեպքեր (բացառությամբ՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված հստակ դեպքերը): Այսինքն՝ եթե զուգահեռներ տանենք սնանկության վարույթի հետ, ապա տրամաբանական է դառնում այն պարտատիրոջ մասով սնանկության վարույթի կասեցումը, որի պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը վիճարկվում է և որպիսի պարագայում օրենքի ուժով նախատեսված է վիճարկվող վարչական ակտի կատարման կասեցում: Ավելին, Օրենքի 20.1-ին հոդվածի 1-ին մասը նախատեսում է սնանկության գործի վարույթը առանձին պարտատերերի պահանջների մասով կասեցման հնարավորություն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով նախատեսված՝ կասեցման հիմքերի առկայության դեպքում, եթե այդ իրավակարգավորումները կիրառելի են սնանկության վարույթում առանձին պահանջների քննության նկատմամբ, իսկ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 157-րդ հոդվածի 1-ին մասն էլ իր հերթին նախատեսում է դատարանի պարտավորությունը կասեցնելու գործի վարույթը, եթե՝ անհնարին է տվյալ գործի

քննությունը մինչև սահմանադրական, քաղաքացիական, քրեական կամ վարչական դատավարության կարգով քննվող այլ հարցով կամ գործով եզրափակվիչ ակտ կայացնելը:

Ուսումնասիրելով ներկայացված դիմումը, հնարավոր է փաստել, որ քանի որ սնանկության վարույթի ընթացքում գրանցվել է մեկ պահանջատեր, որի պահանջի իրավունքը, այս դեպքում վարչական ակտը, վիճարկվում է դատական կարգով, ապա տվյալ պահանջի մասով վարույթը ենթակա է կասեցման: Հաշվի առնելով նաև այն հանգամանքը, որ սնանկության վարույթով գրանցված է միայն մեկ պահանջատեր, ապա ստացվում է, որ վերջինիս պահանջի մասով սնանկության վարույթի կասեցումը կհանգեցնի սնանկության ամբողջ վարույթի կասեցման, և քանի որ նույն հերթի մնացած պահանջները բավարարելու անհրաժեշտություն չկա՝ նույն հերթի պահանջատերերի բացակայության հիմքով, ապա հանգում ենք այն եզրակացության, որ սնանկության վարույթի ընթացքում սնանկ ճանաչված անձի գույքի վաճառքի և դրանից ստացված միջոցների բաշխման անհրաժեշտությունը բացակայում է: Նշվածը փաստվում է նաև այն հանգամանքով, որ անձի սեփականության իրավունքը սահմանադրորեն երաշխավորված իրավունք է, որի անհարկի և անհամաչափ սահմափակումները հանգեցնում են տվյալ իրավունքի խախտման: Ոչ ոք չի կարող զրկվել սեփականությունից, բացառությամբ դատական կարգով՝ օրենքով սահմանված դեպքերի:

Եթե հաշվի առնենք նաև, որ սույն դեպքում սնանկության վարույթի ընթացքում կա մեկ պահանջատեր, որի պահանջի հիմք հանդիսացող վարչական ակտը վիճարկվում է դատական կարգով, այսինքն՝ վերջինիս պահանջի իրավունքը կասկածի տակ է դրված, ապա նշված վիճարկվող վարչական ակտի հիման վրա սնանկ ճանաչված անձի գույքի իրացումը սնանկության վարույթի ընթացքում չի բխում Սահմանադրության նպատակներից և սկզբունքներից (հաշվի առնելով նաև, որ սնանկության վարույթի ընթացքում իրականացվող աճուրդների ընթացքում գույքերի արժեքն անհամեմատ իջնում է նմանատիպ գույքերի համար շուկայում գործող արժեքներից, ապա ստացվում է, որ անձի գույքն անհամեմատ ցածր արժեքով իրացվում է սնանկության վարույթի ընթացքում, այն դեպքում, երբ հնարավոր է, որ սնանկ ճանաչելու հիմք հանդիսացած վարչական ակտը ճանաչվի անվավեր: Ստացվում է, որ անձը անհարկի զրկվեց իր սեփականության իրավունքից և խախտված այդ իրավունքը վերականգնելու համար կրկին ստիպված է լինելու դիմել դատական պաշտպանության):

Անդրադառնալով համաչափության սկզբունքին՝ 2007 թվականի փետրվարի 7-ի ՄԴՈ-677 որոշման մեջ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «...Սահմանադրության 43 հոդվածի 1-ին մասում նաև անուղղակիորեն ամրագրված է հիմնական իրավունքների պաշտպանության համար կարևորագույն նշանակություն ունեցող սկզբունքներից մեկը՝ համաչափության սկզբունքը, որի համաձայն՝ օրենքը կարող է նախատեսել մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների միայն այնպիսի սահմանափակումներ, որոնք համապատասխանում են Սահմանադրությամբ սահմանված նպատակներին և պիտանի, անհրաժեշտ ու իրավաչափ են դրանց հասնելու համար»:

Վերոգրյալի վերլուծությունը թույլ է տալիս փաստել, որ գործող կարգավորումը սահմանադրականության խնդիր չի առաջացնում, եթե սնանկության վարույթով հանդես է գալիս միայն մեկ պահանջատեր, որի պահանջի մասով սնանկության վարույթի կասեցումը հանգեցնում է ամբողջ սնանկության վարույթի կասեցման:

Սակայն, այս ամենն իրավաչափ է միայն այն դեպքում, երբ վիճարկվում են առանձին պահանջատերերի պահանջների հետ կապված հարցեր/հիմքեր, և նման հիմքի անվավեր ճանաչումը չի հանգեցնում անձի սնանկ ճանաչելու հիմքերի բացակայության:

Այլ է իրավիճակը, երբ վիճարկվում է հենց այն հիմքը, որով անձը սնանկ է ճանաչվել և սնանկության վարույթով կան մի քանի պահանջատերեր: Այսինքն՝ կասկածի տակ է դրվում անձին սնանկ ճանաչելու հիմքը: Ավելին, հնարավոր է, որ նշված հիմքը դատական կարգով անվավեր ճանաչվի: Արդյունքում, նման դեպքերում սնանկության վարույթի կասեցման հիմքի բացակայության պայմաններում կստացվի, որ սնանկ ճանաչված անձի գույքը կիրացվի (ընդ որում, սնանկության վարույթի ընթացքում անցկացվող աճուրդների դեպքում իրացվող գույքի արժեքի իջեցումները յուրաքանչյուր չկայացած աճուրդից հետո հանգեցում են այդ գույքերի՝ շուկայական գներից անհամեմատ ավելի ցածր արժեքով վաճառքի), գույքի վաճառքից ստացված միջոցները կբաշխվեն, որից հետո կամ ընթացքում կպարզվի, որ անձին սնանկ ճանաչելու հիմքերը բացակայել են, և սնանկության վարույթը, փաստորեն, ապարդյուն է իրականացվել: Ավելին, մի կողմից սնանկ ճանաչված անձն անհիմն կզրկվի իր սեփականությունից, որի վերականգնման համար կրկին ստիպված է լինելու դիմել դատական պաշտպանության, իսկ մյուս կողմից սնանկության վարույթում գրանցված պահանջատերերը ստիպված են

լինելու վերադարձնել սնանկության վարույթի ընթացքում վաճառված գույքից ստացված միջոցների բաշխման արդյունքում ստացածը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ հանգում ենք օրենսդրական բացի սահմանադրականության հարցի, ուստի, հարկ ենք համարում անդրադառնալ ՀՀ Սահմանադրական դատարանի կողմից նշված հարցի վերաբերյալ կայացված որոշումներին:

Այսպես, 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՄԴՈ-914 որոշմամբ ՀՀ Սահմանադրական դատարանն արձանագրել է. «7. Օրենսդրական բացի սահմանադրականության հարց քննելիս սահմանադրական դատարանի խնդիրն է պարզել, թե տվյալ օրենսդրական բացը հանդիսանում է իրավակարգավորման թերությունը, թե՞ իրավաստեղծ մարմինը նման իրավակարգավորում սահմանելիս հաշվի է առել օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայությունը և ակնկալել այդ իրավական երաշխիքների հիման վրա համապատասխան իրավակիրառական պրակտիկայի ձևավորումը: Սահմանադրական դատարանն իր՝ 2010 թ. փետրվարի 5-ի ՄԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է «Իրավունքի բացը հաղթահարելու հարցում օրենսդիր մարմնի և սահմանադրական դատարանի իրավասությունները դիտարկելով իշխանությունների տարանջատման սկզբունքի համատեքստում՝ սահմանադրական դատարանը հարկ է համարում արձանագրել, որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը խախտում է կամ կարող է խախտել կոնկրետ սահմանադրական իրավունք»: Ջարգացնելով իր վերոհիշյալ իրավական դիրքորոշումները՝ սահմանադրական դատարանը գտնում է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն

դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, կամ **երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը**: Հակառակ պարագայում, իրավակարգավորման բացի սահմանադրականության հարցը ենթակա չէ սահմանադրական դատարանի քննությանը»:

2014 թվականի ապրիլի 8-ի ՄԴՈ-1143 որոշման մեջ ՀՀ Սահմանադրական դատարանը փաստում է, որ «օրենսդրական բացն առկա է այն պարագայում, երբ իրավակարգավորման լիարժեքությունն ապահովող տարրի բացակայության կամ այդ տարրի թերի կանոնակարգման հետևանքով խաթարվում է օրենսդրորեն կարգավորված իրավահարաբերությունների ամբողջական և բնականոն իրագործումը»:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր մի շարք վճիռներում առանձնահատուկ կարևորել է, որ պետությունները պարտավոր են իրենց ներպետական օրենսդրությամբ անհրաժեշտ իրավական նախադրյալներ ստեղծել անձի իրավունքների արդյունավետ պաշտպանությունը երաշխավորելու համար:

Որպես իրավունքի գերակայության, իրավական պետության կայացման ու զարգացման անհրաժեշտ նախապայման՝ պետության պարտականությունն է երաշխավորելու անձանց իրավունքների և ազատությունների համալիր իրացումը: Իրավակարգավորման ձևերի ու միջոցների ընտրությունը, դրանցով անձանց իրավունքների գործադրման առավել արդյունավետ երաշխիքներ ստեղծելու օրինաչափ նպատակ հետապնդելը չեն կարող իրացվել ի հաշիվ սահմանադրաիրավական որևէ նորմի ու սկզբունքի անտեսման: Ուստի, անհրաժեշտ է ստեղծել այնպիսի մեխանիզմներ, որոնք անհարկի չեն սահմանափակի անձանց՝ սահմանադրորեն երաշխավորված իրավունքները, չեն ստեղծի անպիսի իրավիճակներ, որոնք յուրաքանչյուր անգամ կստիպեն անձին դիմել դատարան՝ իր խախտված իրավունքների վերականգնման լեգիտիմ ակնկալիքով:

Օրենսդրական նման կարգավորումը, կարծում ենք, չի բխում ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածնի պահանջներից: Այն, ըստ էության, շրջանցում է անձի՝ սահմանադրորեն երաշխավորված սեփականության իրավունքը, ինչպես նաև՝

դատարան դիմելու լեզբիտիմ ակնկալիքը և լիարժեք դատական պաշտպանության հնարավորությունը:

Ամփոփելով վերոգրյալը՝ Կենտրոնը գտնում է.

«Մասնկության մասին» ՀՀ օրենքի 20.1-ին հոդվածի համապատասխանությունը Սահմանադրության 10-րդ հոդվածի 1-ին մասին, 60-րդ հոդվածի 1-ին, 3-րդ և 4-րդ մասերին, 61-րդ հոդվածի 1-ին մասին, 63-րդ հոդվածի 1-ին մասին, 75-րդ և 78-րդ հոդվածներին խնդրահարույց է:

 Recoverable Signature

Համակարգող՝ **X** Lyudvik Davtyan *Լյուդվիկ Դավթյան*

Signed by: DAVTYAN LYUDVIK 1407840169